ՆԱԽՆԻՆԵՐԻ ԿԱՆՉԸ

ԱՄՓՈՓԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Յուրաքանչյուր բառի դիմաց գրի՛ր մեկական այնպիսի հոմանիշ, որի մեջ լինի *դ*, *պ* կամ *թ*:

ա) թմրել–

բ) գլխարկ–

գ) թիկնեղ–

2. Բառերը համապատասխանեցրո՛ւ իրենց իմաստներին:

անհաղորդ	որևէ բնագրի ճիշտ վերարտադրությունը
առհավատչյա	տարիքով փոքր
կրտսեր	չափազանց վատ
անձեռակերտ	երաշխիք
վատթար	ձեռքով չշինված, բնական
պատճեն	անհաղորդակից

3. Հետևյալ բառազույգերը ճի՛շտ տեղադրիր համապատասխան նախադասություններում:

Վարք – վարկ, *փեղկ – փողք*, *փակցնել – թաքցնել*, *ծագել – ճաքել*

ա) Լեոն պոկեց պատին _____ թռուցիկը և _____դասարանում:

բ) Աղջկա օրինակելի _____ բոլորի աչքում բարձրացրեց իր _____:

գ) Երբ_____ արևը, մենք տեսանք, որ նռները _____էին:

դ) Ես բացեցի լուսամուտի_____ և տեսա, որ անձրևից Արամի տաբատի _____ ցեխոտվել էին:

4. Փակագծում տրված բառերում լրացրո՛ւ բաց թողնված *գ*, *կ* կամ *ք* տառերը և ձևափոխելով տեղադրի՛ր տեքստի համապատասխան նախադասություններում:

Գեղամա լեռների _____ մեջ անհոգ նազում են Սևանա ջրերը: Քարերի ժանիքներն _____ նման ամուր բռնել են ջրերի վրա բազմած կղզին, ուր մի ժամանակ օթևանել է Աշոտ Երկաթը: Նա _____ էր իր_____, որոնք փոքրաթիվ էին, բայց կարողացան հաղթել արաբ զորքերին: Այդ հաղթանակի առթիվ կղզու_____ ու _____ պատարագ մատուցեցին առ Աստված:

(ա__ցան, նետա__իգ, հո__ևորական, ճ__նավոր, գո__ավորություն, ո__որել)

5. Բառաշարքի բառերը խմբավորի՛ր ըստ *դ*, *տ* կամ *թ* բաղաձայնների գրության:

Թուղ_, փար_ամ, այ_պես, այ_օրինակ, խեղ_ել, մար_կային, փ_ախտ, փ_ել (ծաղկել), փ_ել (մաշվել), անդր_վելի, ար_ուն, բարեկիր_, բար_ություն, բեր_աքաղաք, գեղազար_, եր_մնազանց, հար_աչափ, մեր_ընդմեր_, նյար_աբան, անընհատ, անհո_ակապ, անօ_, ար_ուկ, բր_ել (հրել), բր_ել, եր_վել, զար_նել, թր_իռ, խր_ին, կար_, կռ_նել, միջնաբեր_, մշտազվար_, շքեր_, նախընաց, որ_եկորույս, պճնազար_, սաղար_, վար_ագույն, վարսահար_ար, շողոքոր_, շր__ներկ, որ_եսեր, սևամոր_, տմար_ի, օրիոր_ական, հար_, հար_ (խոտ), գ_ ալ (խղճալ), գ_ալ, ար_ուկել, գիր_, որ_ (ճիճու), որ_ (խաղողի վազ), եր_, զվար_ճայն, թար_իչ, լուր_, կար_ալ, հաղոր_ել:

դ	տ	թ

6. Տեքստից դո՛ւրս գրիր բարդ և ածանցավոր բառերը (խմբային աշխատանք):

Հանդարտահոս գետի արևահայաց ափին վսեմորեն բազմած էր լեռնաշղթան՝ սուրսայր կատարներով: Այն ավելի էր վեհացնում հոգեզմայլ ալպյան մարգագետինների գեղեցկությունը՝ երփնե-ռանգ, փարթամ, զմրուխտաշող: Ականակիտ գետը, բարձրաբերձ, երկնահուպ լեռնաշղթան, թավշականաչ մարգագետինները լուռ վկաներն են իմ խենթ մանկության:

Ու հիմա, երբ կրկին կարոտակեզ այցի եմ եկել ոսկեթև ման-կությանս նվիրական, սրբասուրբ վայրերին, պղտորված աչքերիս առաջ իմ մանկության սրտահույզ պատկերներն են, որ լռելյայն գալիս են՝ որպես վաղուց անդառնալիորեն փշրված, անէացած երազային բեկորներ:

Կատարման նմուշ՝

Բարդ բառեր	Ածանցավոր բառեր
հանդարտահոս	վսեմորեն

7. Յուրաքանչյուր բառի դիմաց գրի՛ր մեկական այնպիսի հոմանիշ, որի մեջ լինի *գ*, *կ* կամ *ք*:

ա) արշալույս-

բ) նավակ-

գ) փական-

8. Համեմատի՛ր հայկական և հունական առասպելները, գտի՛ր նմանություններ և տարբերություններ: